ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

h/h	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Կոլյա Մկրտչյան 21.08.2023 11:24:01	Զինվորական ծառայություն չանցած քաղաքացիներին մասնավորապես արական սեռի ներկայացուցիչներին ուժային կառույցներում աշխատանք տրամադրելը նպատակահարմար չէ:	Չի ընդունվել:	Հաշվի առնելով, որ ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը զինվորական ծառայություն է, ուստի նշված դրույթը նպատակ ունի ապահովելու զինվորական ծառայության անցնելու հիմնական սկզբունքների միատեսակ կիրառությունը: Մասնավորապես, համանման կարգավորումներ են նախատեսված նաև Զինված ուժերում և Ոստիկանությունում ծառայության անցնելու համար: Այդուհանդերձ, ազգային անվտանգության մարմիններում ծառայության անցնելու համար հաշվի են առնվում օրենքով սահմանված մի շարք այլ պահանջներ ևս, որոնց բավարարելու դեպքում միայն անձը կարող է ընդունվել ծառայության: Այսպես, օրինակ՝ առողջական վիճակի պատճառով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված քաղաքացին չի կարող անցնել ծառայության ազգային անվտանգության մարմիններում, քանի որ օրենքի համաձայն իր առողջական վիճակով պետք է ունակ լինի կատարելու ազգային անվտանգության մարմինների ծառայողի պարտականությունները, իսկ նշված հանգամանքը ստուգելու համար վերջինս ծառայության ընդունվելիս անցնում է ռազմաբժշկական փորձաքննություն: